

## ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿ

**«Առողջության համընդհանուր ապահովագրության շրջանակներում ապահովագրավճարներն ինքնուրույն վճարողների կամ հարկային գործակալների կողմից հաշվարկված ապահովագրավճարներից ավել փոխանցված կամ ապահովագրավճարի գծով պարտավորության բացակայության դեպքում սխալմամբ կատարված վճարումների վերադարձման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման վերաբերյալ<sup>1</sup>**

2026թ. հուլիսի 1-ին Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում հանրային քննարկման է ներկայացվել «Առողջության համընդհանուր ապահովագրության շրջանակներում ապահովագրավճարներն ինքնուրույն վճարողների կամ հարկային գործակալների կողմից հաշվարկված ապահովագրավճարներից ավել փոխանցված կամ ապահովագրավճարի գծով պարտավորության բացակայության դեպքում սխալմամբ կատարված վճարումների վերադարձման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ), որը մշակվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և Առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի կողմից:

Նախագծի ընդունմամբ ակնկալվում է ներդնել անձի կողմից (կամ նրա համար) ավել կամ սխալմամբ կատարված վճարումների վերադարձի մեխանիզմները և ապահովել այդ գումարների վերադարձի հնարավորությունը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և Առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի կողմից:

- ❖ Թեև Նախագծի մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է «Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 14-րդ հոդվածի 12-րդ մասի պահանջով և ըստ էության պետք է իրավական կարգավորման ենթարկի Օրենքի այդ դրույթով նախատեսված իրավահարաբերությունները, սակայն ապահովագրավճարի անհարկի կուտակումները չեն սահմանափակվում միայն ավել կամ սխալ կատարված փոխանցումներով: Մեր դիտարկմամբ՝ **անհրաժեշտ է վերադարձման հնարավորություն նախատեսել նաև այն դեպքերի համար, երբ անձի օգտին ապահովագրավճարներն ամբողջությամբ կատարվել են Օրենքին համապատասխան, սակայն տվյալ տարում անձը չի գտնվել ՀՀ-ում և օբյեկտիվորեն հնարավորություն չի ունեցել օգտվելու ապահովագրական փաթեթից:** Այս իրավիճակին բխվում են ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող այն անձինք, ովքեր հեռավար եղանակով աշխատում են ՀՀ գործատուի մոտ և նրանց համար գործատուն օրենքով սահմանված կարգով փոխանցում է ապահովագրավճարը: Եվ քանի որ ապահովագրված անձը չի բնակվում ՀՀ-ում, կամ ՀՀ-ում կարճաժամկետ գտնվելու ժամանակահատվածում չի օգտվում ապահովագրական փաթեթի ծառայություններից, ապա նրա օգտին կատարված ապահովագրավճարն օբյեկտիվորեն չեն ծառայում սահմանված նպատակին և չեն կարող դրանց կուտակումները համարվել արդարացված: ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող անձի (վարձու աշխատողի) ապահովագրավճարի վերադարձման առաջարկը լիովին տեղավորվում է նաև Նախագծի Հավելված 2-ի, 2-րդ կետի տրամաբանության մեջ, որի նպատակներից մեկն էլ Հիմնադրամի կողմից անհարկի գերավճարների կուտակումը կանխելն է:

Կարևոր ենք համարում նշել նաև, որ իրավական ակտերով այդպիսի հնարավորություն չնախատեսելը առողջության համընդհանուր ապահովագրության գաղափարների նկատմամբ հասարակության մեջ բացասական տրամադրվածություն և անարդարության զգացողություն է առաջացնում, քանի որ ՀՀ-ում չբնակվող և

<sup>1</sup> [ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐՆԵՐՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԿԱՄ ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐՆԵՐԻԳ ԱՎԵԼ ՓՈԽԱՆԿՎԱԾ ԿԱՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ԳԾՈՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՈՒՄ ՍԽԱԼՄԱԲ ԿԱՏԱՐՎԱԾ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ - e-draft.am](#)

ապահովագրական փաթեթից փաստացի չօգտվող անձի համար Օրենքով սահմանվել է ապահովագրավճար վճարելու պարտականություն և չի նախատեսվել դրա վերադարձման որևէ պայման: Այս իրավիճակում պետությունը չունի որևէ բացատրություն, թե ո՞ւմ կարիքներին են ծառայեցվելու այդ ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող աշխատողի անունով կուտակված ապահովագրավճարները, եթե դրանք կապված են բացառապես տվյալ անձի հետ և Օրենքը չի նախատեսում այդ անձի անունով նախորդ տարվա կուտակված և չօգտագործված ապահովագրավճարի գումարները որպես հաջորդ տարվա ապահովագրավճար դիտարկելու հնարավորություն:

Այսպիսով, առաջարկում ենք Նախագծի 3-րդ կետով ամրագրված «սխալ կամ ավել վճարված գումար» հասկացությունն ընդլայնել և դրանում ներառել նաև ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող ապահովագրված անձի ապահովագրավճարի տարեկան գումարը, եթե անձը տվյալ տարվա ընթացքում չի օգտվել ապահովագրական փաթեթից:

«Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների  
պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ»  
իրավաբան Նաիրա Ավետիսյան